

ՓԱՌՔԻ ՏԵՆՉԸ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՏՈՒՐԵԱՆԻ

Երբ քո սիրով ու գգաւնքով հմայւած,
Ես քո առջեւ լուռ ծունկ էի խոնարհած,
Եւ նայելով քո նազելի պատկերին՝
Խորհում էի, որ դու իմն ես, ո՞վ անգին.
Դու լաւ գիտես, որ ինձ այդ քաղցր ժամերում
Փառքի տենչը կարծես բընաւ չէր յուզում.
Դու լաւ գիտես, որ ես ունայն աշխարհի
Աղմկալի կեանքից իսպառ հեռացած,
Պոէտ անունն ինձ թւում էր տաղտալի.
Որ կեանքի մէջ երկնի կուրծք վաստակած,
Ես խուլ էի ու անտարբեր բընաւին
Մարդկանց անվերջ և՛ զովեստին, և՛ ծաղրին:
Եւ մի՞թէ ինձ կարող էին, ո՞վ ընկեր,
Հասարակաց ծաղր ու ծափը վրդովել,
Երբ հայեացքդ սրտիս խորքը թափանցած,
Եւ այնպէս մեղմ ձեռք ըդ գլխիս խոնարհած,
Դու քաղցրաձայն շրշրնջալով ականջիս՝
Հարցնում էիր—«Աստ, ընկեր սիրելիս,
Բախտաւոր ես, սիրում ես ինձ անսահման,
Սրբեօք երբէք էլ ուրիշին, ինձ նման,
Դու չես սիրել. դու ինձ չես տալ մոռացման...»
Իսկ ես... ես լուռ, ես հազիւ հազ ինձ զսպաճ,
Երջանկութիւնն ողջ էութիւնս պաշարած,

Կարծում էի, թէ այդ քաղցր վիճակում
 էլ չեմ տեսնիլ երբեք ես դառն անջատում:
 Կարծում էի, կեանքն էլ չունի ապագայ,
 Թէ անջատման դաժան օրը էլ չի գալ...
 Բայց ինչ եղաւ... ցաւ, արտասուք և տանջանք,
 Ուխտի դրժումն, նենգ զգացում, սեւ լուտանք—
 Այդ բոլորը յանկարծ, խարխուլ շէնքի պէս,
 Փլէեց զլիսիս... Եւ էլ այժմ ինչ եմ ես,
 Եւ ինչ տեղ եմ: Ահա մենակ ու լռիկ,
 Որպէս ճամբորդ, սրին դաժան փոթորիկ
 Կաշկանդել է խուլ, ամայի մի տեղում,
 Ես կանգնած եմ, և ամեն ինչ իմ աչքում,
 Իմ չորս բոլոր մոլթ-խաւար է երևում:
 Եւ մի նոր իղձ, մի նոր տենչանք այս ժամին
 Իորբօքում են ու աղմկում իմ հոգին.
 Փառք եմ ուզում, որ անունըս փառաւոր
 Քո լսելիքն ալեկոծի ամեն օր,
 Որ ամեն տեղ, ամեն ընկեր ու վայրկեան
 Քեզ պաշարեն փառք ու հռչակն իմ անւան.
 Փառք եմ ուզում, փառք փափագում ես միայն,
 Որ քո շուրջը իմ համբաւը բարձրաձայն
 Օդ դղրդի: Եւ դու խաղաղ ժամերին
 Լուռ ունկնդիր աննենգ, անկեղծ իմ ձայնին,
 Յիշես, ինչպէս դառն հրաժեշտ քեզ տալով,
 Եւ մեր տխուր անջատումը ողբալով,
 Վերջին անգամ, խոր գիշերին ես այգում
 Քեզնից յուսով ջերմ սէր էի աղերսում: